«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-53-4.11.2026-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով (Պ-53-4.11.2026-ՊԻ-011/0, այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է փոփոխություն կատարել ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 394-396-րդ և 400-406-րդ հոդվածների սանկցիաներում՝ խստացնելով պատժաչափերը և բացառելով տուգանքը որպես պատժատեսակ:

Կարևորելով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների և պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ պայքարը՝ հարկ է ընդգծել, որ նշված ուղղությամբ քրեաիրավական պայքարի մեխանիզմների կատարելագործմանն ուղղված օրենսդրական փոփոխություններ իրականացվել են համեմատաբար վերջերս՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2026 թվականի մայիսի 11-ի ՀՕ-196-Ն օրենքով:

Մասնավորապես, հաշվի առնելով թմրամիջոցների ապօրինի շրջանառության ժամանակակից միտումները, այդ թվում՝ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի աճը, ինչպես նաև անչափահասներին թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավելու և նրանց նկատմամբ համապատասխան հանցագործություններ կատարելու բարձր հանրային վտանգավորությունը՝ օրենսգրքի վերաբերելի մի շարք հոդվածներում նշված հանգամանքները նախատեսվել են որպես արարքը ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանքներ: Միաժամանակ խստացվել են օրենսգրքի 393-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև 396-րդ հոդվածով նախատեսված պատժաչափերը:

Այսպիսով՝ իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում արդեն իսկ խստացվել է քրեական պատասխանատվությունը թմրամիջոցների ապօրինի շրջանառության առավել տարածված և հանրային վտանգավորության առավել բարձր աստիճան ունեցող դրսևորումների համար:

Հաշվի առնելով նշված օրենսդրական փոփոխությունների ընդունումից անցած համեմատաբար կարճ ժամանակահատվածը՝ գտնում ենք, որ քրեական պատասխանատվության հետագա խստացման անհրաժեշտության և շրջանակի վերաբերյալ հարցերը նպատակահարմար է քննարկել արդեն իսկ իրականացված փոփոխությունների կիրառման բավարար պրակտիկայի ձևավորումից և դրանց արդյունավետության գնահատումից հետո: Անհրաժեշտ է պրակտիկայի բավարար ժամանակահատվածի հիման վրա նախ ուսումնասիրել վիճակագրական ցուցանիշները, գնահատել գործող սանկցիաների կիրառման գործնական ազդեցությունը և հիմնավորել, թե ինչու գործող քրեաիրավական միջոցները բավարար չեն: Հակառակ պարագայում առկա է առանց բավարար հիմնավորման քրեական քաղաքականության խստացման վտանգ:

Միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ հանցագործությունների համար նախատեսված սանկցիաները պետք է ձևավորվեն օրենսգրքի հատուկ մասով նախատեսված այլ հանցագործությունների (մասնավորապես՝ անձի կյանքի, առողջության, ազատության դեմ ուղղված հանցագործությունների) պատժատեսակների և պատժաչափերի հետ համադրությամբ: Նախագծի հիմնավորմամբ ներկայացված չէ նման համեմատական վերլուծություն, ինչը կարող է խաթարել տարբեր հանցագործությունների հանրային վտանգավորության աստիճանով պայմանավորված պատժաչափերի համակարգային համաչափությունը:

Նախագծով քննարկվող հոդվածների սանկցիաներից «տուգանք» պատժատեսակը հանելու անհրաժեշտությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի՝ հաշվի առնելով այն, որ օրենսգրքի 59-րդ հոդվածով տուգանքը նախատեսված է որպես հիմնական պատիժ, որի կիրառման հնարավորությունն ու չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում հանցագործության ծանրությունը, պատճառված

վնասը, ստացված օգուտները, դատապարտվողի և նրա ընտանիքի գույքային դրությունն ու եկամուտ ստանալու հնարավորությունը (նախատեսված են նաև վճարման հետաձգման, մաս-մաս վճարման և հանրային աշխատանքներով փոխարինման մեխանիզմներ)։ Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 71-րդ և 78-րդ հոդվածների, ինչպես նաև օրենսգրքի 7-րդ հոդվածի (արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունք) ու 69-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի (պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները) համաձայն՝ պատիժը պետք է լինի համաչափ և հնարավորություն տա ապահովելու պատժի անհատականացումը՝ հաշվի առնելով նաև դրա ազդեցությունը անձի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա։ Տուգանքի բացառումը սահմանափակում է ինչպես դատարանի ընտրության հնարավորությունները, այնպես էլ՝ օրենսդրական մակարդակում պատժի անհատականացման գործիքակազմը։

Նախագծով տուգանքի վերացմանը զուգահեռ սանկցիաներում պահպանվում են ազատությունից զրկելու հետ չկապված այլ պատժատեսակներ։ Այս համատեքստում անհրաժեշտ է հիմնավորել, թե ինչով է պայմանավորված հենց տուգանքի բացառումը, և ինչու են պահպանվող պատժատեսակները համարվում նպատակահարմար, իսկ տուգանքը՝ ոչ։

Բացի այդ՝ նախագծով առաջարկվում է օրենսգրքի 40-րդ գլխով նախատեսված առանձին հանցակազմերի՝ 394-րդ, 396-րդ, 400-րդ, 403-րդ, 404-րդ և 406-րդ հոդվածների 1-ին մասերով նախատեսված արարքների համար ազատազրկման առավելագույն ժամկետը 2 տարուց դարձնել 3 տարի, ինչի արդյունքում փոխվում է այդ արարքների ծանրության աստիճանը՝ ոչ մեծ ծանրության հանցանքներից միջին ծանրության հանցանքների։

Այս առնչությամբ հարկ է նկատի ունենալ, որ օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձին ազատազրկման ձևով պատիժ նշանակելու սահմանափակումը միջին ծանրության հանցանքների նկատմամբ կիրառելի չէ։ Հետևաբար անհրաժեշտ է գնա-

հատել առաջարկվող փոփոխության հնարավոր ազդեցությունը պատժի նշանակման պրակտիկայի և ազատազրկման ձևով պատիժների կիրառման վրա, ինչպես նաև հիմնավորել ժամկետի բարձրացման անհրաժեշտությունը՝ յուրաքանչյուր հանցակազմի հանրային վտանգավորության հաշվառմամբ:

Միաժամանակ քրեական իրավունքի տեսության համաձայն՝ հանցավորության կանխարգելման տեսանկյունից առավել էական նշանակություն ունի ոչ այնքան պատժի խստությունը, որքան օրենքի անխուսափելի և արդյունավետ կիրառումը, հանցագործությունների ժամանակին բացահայտումը, դրանց նպաստող պայմանների վերացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը և նշված հոդվածների սանկցիաների խստացման կապակցությամբ համեմատաբար վերջերս կատարված փոփոխությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է այս փուլում ձեռնպահ մնալ քննարկվող հանցակազմերում փոփոխություններ կատարելուց և դրանց անդրադառնալ նշված հոդվածների սանկցիաների վերջին խստացումների մասով բավարար պրակտիկայի առկայության դեպքում՝ դրա վերլուծության արդյունքներով: